ԳԱՌՆԻԻ ՄԻ ՔԱՆԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՏՄԱ-ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՌՈՒՄՈՎ (XIII—XIV դդ.)

ՀԱՄԼԵՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Միջնադարյան Գառնիի տնտեսության, առևտրի, սոցիալական կյանքի որոշ կողմերի քննության համար կարևոր են գյուղաքաղաքի տարածքում գտնվող ճարտարապետական հուշարձանների վրա փորագրված արձանագրությունները, որոնք հիմնականում վերաբերում են XIII—XIV դդ.։ Այս ժամանակաշրջանի մի շարք աղբյուրներում Գառնին հիշատակվում է որպես բավականին մեծ բնակավայր՝ գյուղաքաղաք կամ քաղաքագյուղ, շահաստան դղյակ, նույնիսկ քաղաք և մայրաքաղաք[1]։ Մատենագրական և արձանագրական տեղեկությունների համադրումը Գառնիի պեղումներից գտնված նյութական մշակույթի արժեքների հետ[2] հնարավորություն է ընձեռում ուսումնասիրելու այդ գյուղաքաղաքի տնտեսամշակութային և սոցիալական կյանքը։ Անդրադառնանք մեզ հետաքրքրող արձանագրություններին։

Գառնիի հեթանոսական տաճարի վրա գտնվող Խոշաք իշխանուհու և նրա որդի Զաքարեի հայտնի արձանագրությունն ամբողջությամբ հրատարակել է Բ. Առաքելյանը[3]։Ահա այդ արձանագրության՝ մեր խնդրին առնչվող մասը. «Զխ [1291]։ Թվ[ական]ութեան... [ես] Խոշաք... եւ իմ որդին Ամիր Զաքարէ գիր տուաք Գառնո մեր սեփական հայրենեցս, որ եղն :ԺԱ: սպ։ շարիատ էր եւ :Ի: ոչխարն :Ա: բալախահակ, եւ մեք վերուցաք զայս հարկ... ազատեցաք զեղն և զոչխար յամենայն հարկաց։ Վերուցաք և զգինո բաժ...»[4]։ Հաջորդը՝ Հովհաննեսի և Վանականի արձանագրությունն է Սունպենց վանքից. այն տեղեկացնում է. «ՉԿԴ [1315] :Թվ: Շնորհիւն այ, ես Յո/հաննէս որդի Տիրատրո եւ ես Վանա/կանս/ որդի Յովանիսի՝ Գառնո տամղատարքս /վասն մեր պարոնացն յերկար կենդանութեան/ եւ մեր հոգոյս համար. մեր տանուտէր/ացս բանիւ. Կարապետին, Ածատրո/, Խոյտամին, Ասխաթանա, Ամէնատ[րոյ]/, Միքէլին, Սէթին, Վարդին, Մէլիք[ջ]/անին եւ այլ մեծ ու փոքր տանուտէր[ացս]/, վերուցաք զՍունպենց վանի/[ցս] զհասարակաց գինո եւ զ[ամեն]այն/ ցեղ վաճառի տամղա եւ զշա[ղ]/ացի մահկանա, որ սբ Ածածնիս լուս/ացա լինի։ Եւ թէ ոք ի քրիստոնէից/ կամ այլազգեց, որ յայս կա/պալիս վերա լինի ու զմեր աւանդս խ/ափանել ջանա ու զմեր հոգիս զր/կէ, զրկեսցի նա յողորմութենէն/ այ եւ յամե-

---

1 Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 81—82, 225, 348, «Մեծին Վարդանայ Բարձրբերդցւոյ Պատմութիւն Տիեզերական», ի լույս ընծ. Մ. Էմին, Մոսկվա, 1861, էջ 188, Գ. Հովսեփյան, Հավուց Թառի Ամենափրկիչը և նույնանուն հուշարձանները հայ արվեստի մեջ, Երուսաղեմ, 1937, էջ 16, «Աշխարհացույց Վարդանայ վարդապետի», Փարիզ, 1960, էջ 31, «Մամր ժամանակագրություններ, XIII—XVIII դդ.», կազմեց Վ. Ա. Հակոբյան, հ. I, Երևան, 1951, էջ 39, հ. II, 1956, էջ 334, 336, «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1950, էջ 351։

2 Գառնիի պեղումները սկսվել են 1949 թ. և շարունակվում են մինչև այսօր, ակադ. Բ. Առաքելյանի գլխավորությամբ։ Միջնադարյան նյութերի մի մասը հրատարակված է (տե՛ս Б. Н. Аракелян, Гарни I, Ереван, 1951, с. 69—87, Բ. Ն. Առաքելյան, Գ. Հ. Կարախանյան, Գառնի, III, Երևան, 1962 (այսուհետև՝ «Գառնի»)։

3 «Գառնի», էջ 45։

4 Արձանագրությունն առաջին անգամ որոշ տարբերություններով հրատարակել է Գ. Հովսեփյանը (տե՛ս Գ. Հովսեփյան, Գառնիի ավերակները. «Հովիտ», 1910, № 8, էջ 122)։

նայն սրբոց յերկնաւ/որաց եւ յերկրաց անէծս առցէ եւ/ յամեն ազգ նալաթ լիցի եւ ի մեծ/ պարոնաց խռովութի[ւն] անգանի»[5]։ Նույն վանքի բակում ս. Աստվածածին եկեղեցուն պատկանող սրբատաշ մի քարի վրա պահպանվել է մի այլ արձանագրություն (թերի), որը, դատելով տառաձևերից և իմաստից, դարձյալ վերաբերում է XIII—XIV դդ.։ Ահա այդ արձանագրությունը. «...[մ]եր պարոնացն յերկար կենդանութ[եան] [եւ] մեր հոգոյս համար վէրո[ւ]ցաք զվանա/ցս զշաղացի խարաճ և զդահս,/ կատէպանի հակ, զկթանա հակ, զվ[ե]ցկո թաղար և այլ զ[ի]նչ ձեռնա...»[6] (տե՛ս նկարը)։ Այս արձանագրությունը ևս վերաբերում է Սունպենց վանքին և հավանաբար կազմել են տամ-ղատարները։



Վերոբերյալ երեք արձանագրությունները, ինչպես նաև ստորև նշվածները, վկայում են գյուղաքաղաքի բարձր զարգացած երկրագործական և անասնապահական տնտեսության մասին։ Գառնիի ընդարձակ հողահանդեսը հիմնականում փռված էին բնակավայրից դուրս տարածվող հարթություններում և Ազատ գետի ձորերում։ Արձանագրություններում այդ հողահանդեսը հիշատակվում են տարբեր անվանումներով։ Հոգևոր կենտրոններին արված նվիրատվությունների մեջ ամենից հաճախ հանդիպում ենք այգիների[7]։ Այսպես, 1317 թ. մի արձանագրության համաձայն ոմն Խերխաթուն և նրա Ամիր որդին Սունպենց վանքին են նվիրել Թամզո տակ վայրում գտնվող փրենց այգին՝ փոխարենը ստանալով

---

5 Արձանագրությունն երիցս գրավել է հետազոտողների ուշադրությունը։ Առաջին անգամ մի քանի տող, և այն էլ աղավաղված, հրատարակել են Սիսոևն ու Քուչուկ Հովհաննիսյանը (տե՛ս «Материалы по археологии Кавказа», вып. 13, М., 1916, с. 35)։ Տարբեր առիթներով այս արձանագրությանն անդրադարձել և որոշ հատվածներ հրատարակել է Բ. Առաքելյանը (տե՛ս «Գառնի», էջ 46, Բ. Ն. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դդ., հ. 2, Երևան, 1964, էջ 158)։ Արձանագրության լրիվ տեքստը, «մահկանա» տերմինի մեկնաբանման կապակցությամբ, հրատարակել է Գ. Գրիգորյանը (տե՛ս Գ. Գրիգորյան, Դիտողություն միջնադարյան մի տուրքի մասին, «Պատմա-բանասիրական հանդես», 1963, № 2, էջ 262)։

6 Արձանագրությունը հրատարակվում է առաջին անգամ։

7 Գառնիի զարգացած այգեգործական տնտեսության մասին տեղեկություններ են հասել նաև IX—X դդ. (տե՛ս «Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփանոսի Օրբէլեան, արքեպիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, 1910, էջ 174, 179, այսուհետև՝ Ստեփանոս Օրբէլեան)։

երեք պատարագ[8]։ Հեթանոսական տաճարի մոտ կառուցված Մաշտոցի մատուռի քահանա Մխիթարը այդ մատուռին է նվիրել «...զ[իմ] [Տ]անծո լանջի ագին...»[9]։ Գառնեցիներ Խաչատուրը և Սարգիսը գյուղաքաղաքի արևելյան գերեզմանատան մատուռին են նվիրել իրենց «այգին ի խականա ձորի» փոխարինը ստանալով մեկ պատարագ։ Վարելահողերը հիշատակվում են «հող» բառով։ XIV դ. սկզբի մի արձանագրության համաձայն գառնեցի միաբան Խուրուխթարը Սունպենց վանքին է նվիրել իր «Արտագոյնո հողն»[10]։ Մի ուրիշ արձանագրության մեջ նշվում է, որ վանքին է նվիրվել «Հայրենիք հողն», որը գտնվում էր «յԱպենց հողին գլխին»։ Նույն ժամանակի մի այլ արձանագրության մեջ հողահանգը հիշատակվում է «խուպան» բառով՝ անմշակ, կորդ հողի իմաստով[11]։ Գյուղաքաղաքից ոչ հեռու գտնվող Հավուց Թառի մի արձանագրության մեջ նշվում է, որ վանքին է նվիրվել «:Բ: աղբին», այսինքն երկու պարարտացված հողակտոր։ Միջնադարյան Հայաստանում բավականին տարածված էր հողերի պարարտացումը։ Այն կիրառվում էր նաև Գառնիի ձորերում։ Տեղեկություններ կան նաև նոր գցված մատղաշ այգիների մասին, որոնք հիշվում են «նորք» անվան տակ։

Գառնիի երկրագործական տնտեսության մասին կողմնակի վկայություն է «կատէպանի հակը»։ «Կատէպանի հակ» կապակցությունը Գառնիի արձանագրության (տե՛ս նկարը) մեջ հանդիպում է առաջին անգամ և այլուր վկայված չէ։ Կատեպան (կատապան—կատպան տարբերակներով) բառը միջին դարերում կիրառվել է երկու իմաստով. ա) կողմնակալ, կուսակալ, քաղաքապետ և բ) այգեպան, այգու պահապան[12]։ Կատեպան էին կոչվում Անիում Բյուզանդիայի

---

8 Արձանագրությունը փորագրված է Սունպենց վանքի ս. Աստվածածին եկեղեցուն հարավից կից կառուցված որմնափակ խաչքարի հյուսիսային կողին։ Բերում ենք արձանագրության լրիվ տեքստը, քանի որ Սիսոևն ու Քուլոյի Հովհաննիսյանը հրատարակել են զգալի բացթողումներով ու աղավաղումներով («Материалы по археологии Кавказа», с. 35—36). «Կամօին (Ի) այ, եռ Եէրխաթունս եւ իմ որդիս Ամիրս /միաբանաւք սր Աստծնիս առաք զմեր հայրենի ա/յգին ի Թամզ տակին ընծա մեր գէրեզմանատան /Սունպենց վանիցս եւ միաբանքս խոստացան ի տարւ/ին :Գ: աւր պատարագել զԻս :Բ: աւրն ինձ ն :Ա: Ամիրին։ Ով որ հանել չանա զայդիս յեկեղեցոյս, մասն զՅուդայի առցէ եւ յերից :սբ: ժղ: անիծ[եալ] լից[է]։ ՉԿՉ ք.»։

9 Գ. Հովսեփյանն այս հատվածը կարդացել է. «էառ [ա.....] անծոլան առչի ագին» (Դ. Հովսեփյան, Գառնիի ավերակները, էջ 123). «Տանծո լանջ» տեղանունը հանդիպում է նաև Հավուց Թառի մի արձանագրության մեջ, որը Մանկունին (տե՛ս «Վիմական տարեգիր», կազմեց Կ. Կոստանյան, Ս. Պետերբուրգ, 1913, էջ 136) և Գ. Հովսեփյանը (տե՛ս Գ. Հովսեփյան, Հավուց Թառի Ամենափրկիչը..., էջ 23), կարդացել են շեղումներով։ Արձանագրության ստույգ տեքստը հրատարակել է Ս. Ավագյանը (տե՛ս Ս. Ա. Ավագյան, Վիմական արձանագրությունների բառաքննություն, Երևան, 1978, էջ 314)։

10 «Արտագոյն» բառն այլ արձանագրություններից հայտնի չէ։ Երեմիա վարդապետն այն մեկնում է որպես «բացագոյն» («Բառգիրք հայոց արարեալ ի սբ էջմիածին Երեմիա Վարդապետէ», Կ. Պոլիս, 1728, էջ 54), թերևս «ավելի հեռու, ամենահեռու» իմաստով (տե՛ս «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հ. 1, Վենետիկ, 1836, էջ 470. (այսուհետև՝ ՆՀԲ), Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. I, Երևան, 1971, էջ 403, Սա. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հ. I, Երևան, 1944, էջ 352)։ Այս արձանագրության մեջ այն դրված է սեռական հոլովով (Արտագոյնո) և ավելի հավանական է, որ տեղանուն է՝ առաջացած թերևս Գառնիի հանդերձ ծայրում, վերջնամասում գտնվելու պատճառով։

11 Գ. Հովսեփյան, Խաղբակյանք կամ Գռոյյանք հայոց պատմության մեջ, Անթիլիաս, 1969, էջ 322։

12 ՆՀԲ, հ. 1, էջ 1061, Ս. Ամատունի, Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912, էջ 332, Հր. Աճառյան, Հայերեն գավառական բառարան, Թիֆլիս, 1913, էջ 554, նույնի՝ Հայերեն արմատական բառարան, հ. II, Երևան, 1973, էջ 537, Սա. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հ. II, Երևան, 1944, էջ 398—399։

նշանակած կառավարիչները։ Անին Արփասլանի կողմից գրավվելուց հետո այդ տիտղոսով հիշատակված պաշտոնյայի այլևս չենք հանդիպում։ XIII դ. սկսած այն ավելի հաճախ կիրառվում էր երկրորդ իմաստով[13]։ «Կատէպան» տերմինը հանդիպում է նաև Հավուց Թառի մի արձանագրությունում. «Ես Գրիգոր Կատէպանս էտու : Խ: դհ: ի սբ ուխտս եւ սպասաւորքս գրեցին ինձ :բ: ժամ ի տարուոջն...»։ Արձանագրության առաջին հրատարակիչ Գ. Հովսեփյանը այն վերագրել է XIII դ.։ Տարակուսելով, որ դժվար թե այդ տերմինը օգտագործվել է կուսակալ իմաստով, հեղինակը գրում է. «Ժողովրդական գավառաբարբառի հետ կապված չէ՞ ընծայաբեր Գրիգորի այդպիսի կոչումը։ Արարատյան բարբառով «կատէպան» նշանակում է այգեպան...»[14]։ XIII—XIV դդ. Զաքարյանների մոտ «կատեպան» պաշտոնյայի գոյության մասին (և առավել ևս նրա օգտին հավաքվող հարկի մասին) ոչ միայն ուղղակի, այլև անուղղակի ոչ մի տեղեկություն չի պահպանվել։ Ավելի հավանական է, որ վերջին երկու արձանագրություններում էլ այն, ինչպես որ մատենագրական համաժամանակյա մի շարք աղբյուրներում է, ունի այգեպան իմաստը։ Մյուս կողմից էլ պարզ է, որ «կատէպանի հակը» ոչ թե կատեպանի օգտին (ինչպես ասենք «ձեռնավորահակը», «ամիրահակը», «դեմէթէրահակը»)[15], այլ կատեպաններից, այսինքն այգեպան-այդետերերից հավաքվող հարկ էր։ Տվյալ դեպքում վանքն է հանդես գալիս որպես այգետեր, և «կատէպանի հակն» էլ վանքին պատկանող այգիներից գանձվող հարկն էր։

Քննվող ժամանակաշրջանում այգիների եկամտից գանձվող հարկը բազմիցս վկայված է վիմագրերում։ Այսպես, Փարպիում 1264 թ. հիշատակված է «զՓարպոյ այգեաց շարիատն»[16], Ավանի 1285 թ. և 1287 թ. արձանագրություններում՝ «զԱւանայ զայգեաց շարետն»[17], Մրենի 1273 թ. մի արձանագրության համաձայն Արջոառիճ վանքի՝ Մրենում և Օշականում ունեցած այգիներն ազատվել են «ի խալաէ»[18]։ Նույն Մրենում 1288 թ. հիշատակվում է «զէգեց գինո և խաղողի խալէն»[19], իսկ Հովհաննավանքում՝ «վանաց էգոց հողին շարինատըն»[20]։ Ինչպես տեսնում ենք, նույն հարկն արտահայտող բառակապակցությունները տարբեր տեղերում միանման չեն։ Այս բազմազանությունը նկատի ունենալու դեպքում «կատէպանի հակի» եզակի օգտագործումը Գառնիում կարելի է դիտել որպես հարկային տերմինների տեղայնացման արդյունք։

Գառնիի անասնապահական տնտեսության մասին տեղեկությունները ավելի սահմանափակ են։ Երկրագործության մեջ վճռական դեր էր խաղում քաշող ուժը՝ սովորաբար եզը։ Եվ պատահական չէ, որ Զաքարյան իշխանների արձանագրության մեջ, որպես կարևոր բարեգործական քայլ, հիշատակվում է հետևյալը. եթե մինչ այդ մեկ եզի համար որպես «շարիատ» վերցվում էր տասներեկ սպիտակ (արծաթյա) դրամ, ապա Զաքարյանները գառնեցիներին ազատեցին այդ հարկից։ Ըստ Մխիթար Գոշի Դատաստանագրքի՝ «Եզին այլ հարկ մի լիցի, զի այն իսկ է, զոր աշխատեալ հնգեկի»[21]։ Փաստորեն եզներից գանձվող հարկն անուղղակի հարկ էր և, ինչպես հուշում է հարկերի վերացման փաստը,

---

13 «Կատապան» բառի տակ Հր. Աճառյանը բերել է նաև բոլոր այն մատենագրական տեղեկությունները, որտեղ բառը հանդես է գալիս «այգեպան» իմաստով և շեշտել, որ վերջին իմաստը այն ստացել է ավելի ուշ (Հ ր. Ա ճ ա ռ յ ա ն, Հայերեն արմատական բառարան, հ. II, էջ 537)։

14 Գ. Հ ո վ ս ե փ յ ա ն, Հավուց Թառի Ամենափրկիչը..., էջ 16։

15 Ս. Ա. Ա վ ա գ յ ա ն, նշվ. աշխ., էջ 163—172։

16 «Վիմական տարեգիր», էջ 107։

17 Կ ա ր ո Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն, Երևան։ Միջնադարյան հուշարձանները և վիմական արձանագրությունները, Երևան, 1975, էջ 195,

18 «Վիմական տարեգիր», էջ 116։

19 Նույն տեղում, էջ 130։

20 Նույն տեղում, էջ 142։

21 Մ խ ի թ ա ր Գ ո շ, Գիրք Դատաստանի, Երևան, 1975, էջ 32՛ (այսուհետև՝ Մ խ ի թ ա ր Գ ո շ)։

այս և այլ անուղղակի հարկերի գանձումը քայքայման եզրին էր հասցնում գյուղաքաղաքի ինչպես անասնապահական, այնպես էլ երկրագործական տնտեսությունը։ Դառնին տեղադրված լինելով նախալեռնային գոտում, ուներ բոլոր հնարավորությունները ոչխարաբուծության համար, որի զարգացումը չկասեցնելու նպատակով Զաքարյանները զիջում են որոշ հարկեր։ Ոչխարներից միայն որպես «բալախահակ», այսինքն իշխանական արոտավայրերում արածեցնելու դիմաց գանձվող հարկ[22], վերցվում էր քսան ոչխարից մեկը (արձանագրության մեջ՝ «Ի՝ ոչխարն։ Ա՝ բալախահակ»)։ Որ եզներից ու ոչխարներից գանձվել են և այլ հարկեր, վկայում է Խոշաք իշխանուհու արձանագրության «աղատեցաք զեզն և զոչխարն ամենայն հարկաց» արտահայտությունը։ Դառնիի նորահայտ արձանագրությունում հիշատակված է նաև «կթանա հակ» տերմինը, որը այլ արձանագրություններից մեզ հայտնի չէ։ Նոր Հայկազյան բառարանը «կթան» բառը բացատրում է որպես «Կենդանի յորմէ կթի կաթն, կաթնաբեր անասուն»[23]։ Այս բառի տակ նույն իմաստն են դնում համարյա բոլոր բառարանագիրները[24]։ Կթան անասուններից ամենակարևորը կովն էր, որից գանձվող հարկերի մասին կան մատենագրական և արձանագրական տեղեկություններ։ Ըստ Մխիթար Գոշի Դատաստանագրքի՝ «Կովու լիտր եղն միայն լիցի»[25]։ Անիի և Շիրակավանի XIV դ. մի քանի արձանագրություններում[26] կովերից գանձվող տուրքն անվանված է «զկովին համրրելէ» կամ «համարելէ» (այսինքն՝ համրելուց, հաշվելուց)[27], Բջնիում՝ «զկովայհամարն»[28], իսկ Օձունի 1275 թ. մի արձանագրության մեջ հիշատակվում է «կովի գլխահակը»[29]։ Այստեղ դարձյալ ակնառու են նույն տուրքի անվան տեղական տարբերակները։ Թվում է, որ «կթանա հակն» էլ կովերից գանձվող տուրքն էր, չնայած լայն առումով այն կարող էր նշանակել ոչ միայն կովերից, այլև կթան այլ անասուններից գանձվող հարկ։

Անասնապահական տնտեսության մասին որոշ նյութ են տալիս պեղումները։ Ճիշտ է, Դառնիում պեղված բնակելի-տնտեսական համալիրներում դրժվար է տարբերակել գոմը կամ համանման կից կառույցները, սակայն XII—XIV դդ. շերտերում հաճախակի հանդիպող ձիու, ավանակի, եզան պայտերը, սանձերի մասերը և ձձումների բեկորները վկայում են, որ անասնապահությունը գյուղաքաղաքի տնտեսության կարևոր ճյուղերից մեկն էր։

Զարգացած երկրագործական տնտեսությունն իր հերթին ենթադրում է երկրագործական մթերքների վերամշակման արտադրական կառույցների առկայություն։ Հետաքրքիր տեղեկություններ են պահպանվել հատկապես ջրաղացների մասին։ Դառնիի տամղատարներ Հովհաննեսը և Վանականը վերացրել են Սունպենց վանքից գանձվող «ջաղացի մահկանան»։ Վերոբերյալ նորահայտ արձանագրության համաձայն հօգուտ նույն վանքի թողնվել է «զջաղացի խարաճ եւ զդահս»։ «Դահ» տերմինը որպես ջրաղացից գանձվող հարկ հանդիպում է նաև Անիի մի արձանագրության մեջ. «զջաղացնոյս ամէնոյ զդամղէն և զդահեկ»[30]։ Եթե ընդունելի է, որ խարաջը, տամղան և մահկանան ջրաղացի հետ դրվելիս կարող էին նշանակել եկամտահարկ (կամ վարձ)[31], ապա պարզ չէ, թե

22 Б. Н. Аракелян, Гарни, I, с. 84, Ս. Ա. Ավագյան, նշվ. աշխ., էջ 37—38։

23 ՆՀԲ, էջ 1095։

24 Հ. Աճառյան, Հայերեն գավառական բառարան, էջ 568, նույնի՝ Հայերեն արմատական բառարան, հ. II, էջ 585, Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հ. II, էջ 433։

25 Մխիթար Գոշ, էջ 32։

26 Հ. Ա. Օրբելի, Դիվան հայ վիմագրության, պրակ 1-ին, Անի քաղաք, Երևան, 1966։ էջ 27, 28, «Վիմական տարեգիր», էջ 247։

27 Ս. Ա. Ավագյան, նշվ. աշխ., էջ 175։

28 «Վիմական տարեգիր», էջ 226։

29 Ս. Ա. Ավագյան, նշվ. աշխ., էջ 174։

30 Հ. Ա. Օրբելի, նշվ. աշխ., էջ 28։

31 Գ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 263, Ս. Ա. Ավագյան, նշվ. աշխ., էջ 121։

ինչ է նշանակում դահը կամ դահեկը[32]։ Կարելի է ասել միայն, որ ջրաղացից գանձվող հարկը իր մեջ կարող էր ներառնել նաև մի այլ հարկ, որը կամ եկամըտահարկի մի մասն էր, կամ էլ դրանից տարբերվող մի այլ տուրք, որը միշտ չէ, որ գանձվում էր (Շիրակավանի 1231 թ. մի արձանագրության մեջ հիշատակվում է միայն «գխարած ջաղջաց»-ը[33], իսկ Գառնիում, ինչպես տեսանք՝ միայն «զջաղացի մահկանա»-ն)։ Սունպենց վանքի մի արձանագրություն հայտնում է. «Յուսով բարերարին այ, ես Ստեփաննոս/ Յովհաննիսեանց ետու :Գ: աւր ջաղաց ի սբ/ Ածածինս եւ սպասաւորք սբ ուխտիս խոստացան :Բ: աւր պատարագ ի տարին կատարեն»[34]։ Տվյալ դեպքում վանքը դառնում է ոչ թե սեփականատեր, այլ, «փոխհատուցելով» լայնորեն վաճառվող պատարագներով, իրավունք է ստանում շաբաթական երեք օր տնօրինել ուրիշ սեփականատիրոջ ջրաղացը։ Եթե հաշվի առնենք, որ միջին մեծության մի այգի կամ վարելահող նվիրաբերելու դեպքում էլ ստանում էին երկու պատարագ, ապա պարզ կդառնա, թե ինչպիսի եկամտաբեր կառույցներ էին ջրաղացները[35]։ Ջրաղացները, ինչպես ցույց են տվել հնագիտական դիտումները, տեղադրված էին Ազատ գետի երկայնքով՝ Գառնիի կիրճում։ Մինչև այսօր էլ Հավուց Թառ տանող կամրջի մոտերքում պահպանվել են դրանցից մի քանիսի ավերակները։

Գառնիի ձիթհանության մասին համարյա տեղեկություններ չկան. ինչպես կարելի է մակաբերել Հովհաննեսի և Վանականի արձանագրությունից, գյուղաքաղաքի տամղատարները վանքից գանձվող որոշ հարկեր վերացրել են, «որ մբ Ածածնիս լուսացու լինի», այսինքն եկեղեցին կարողանա հոգալ լուսավորման համար օգտագործվող ձեթի ծախսերը։ Միջնադարյան եկեղեցիներում օգտագործվող շքեղ ջահերի, աշտանակների մասին պահպանվել են ուշագրավ մատենագրական տեղեկություններ[36]։ «Բազմաչք», հնարամիտ կառուցվածքով և վարպետ հարդարումով եկեղեցական ջահեր և աշտանակներ են գտնվել Անիի պեղումների ժամանակ[37]։ 1965 թ. Գառնիի բազիլիկ եկեղեցու պեղումների ժամանակ գտնվել է կավե գլանաձև ջահի մի մաս, որը հավանաբար ունեցել է ութ լուսատու կետ։ Պահպանվել են այդ կետերից միայն երկուսը. դրանք եռանկյունաձև, կլոր անկյուններով թասեր են՝ ամրացված գլանաձև սնամեջ իրանին։ Ջահը կարելի է թվագրել XII—XIV դդ.[38]։ Որ իսկապես եկեղեցիների լուսավորության համար մեծ քանակությամբ ձեթ էր ծախսվում և որ լուսավորության հարցը գտնվում էր հոգևորականների ուշադրության կենտրոնում, կարող է

---

32 Տվյալ դեպքում խոսքը բառի հարկային իմաստի մասին է։ Ինչպես ցույց է տվել Հր. Աճառյանը, դահեկ-դահիակը փոխառություն է պարսկերենից՝ կազմված dah—տաս և yak—մեկ բառերից ու նշանակում է տասից մեկը, տասանորդ (Հ ր. Ա ճ ա ռ յ ա ն, Հայերեն արմատական բառարան, հ. I, էջ 615)։ Դահի կամ դահիակի երկու առանձին վկայությունների մանրամասն քննության շնորհիվ Ս. Ա. Ավագյանը հաստատել է, որ այն երկու դեպքում էլ առևտրական գործարքից տեղական իշխանի, կալվածատիրոջ կամ պարոնի օգտին գանձվող հարկ էր, թերևս վաճառքի ընդհանուր գումարի մեկ տասներորդը (տե՛ս Ս. Ա. Ա վ ա գ յ ա ն, նշվ. աշխ., էջ 62)։ Այն մեր դեպքի հետ չի կապվում։

33 «Վիմական տարեգիր», էջ 74։

34 Այս Ստեփանոս Հովհաննիսյանցը մի նվիրատվական արձանագրություն էլ ունի Հավուց Թառում (Գ. Հ ո վ ս ե փ յ ա ն, Հավուց Թառի Ամենափրկիչը..., էջ 25)։

35 Բ. Ավդալբեգյանի հաշվումներով քննվող ժամանակաշրջանում մեկ պատարագն արժեր մոտ 20—25 դահեկան (տե՛ս Թ. Ա վ դ ա լ բ ե գ յ ա ն, Մի գաղտնիք հայ վիմական արձանագրությունների մեջ ու նրա նշանակությունը Հայաստանի տնտեսական զարգացման պատմության համար, «Հայագիտական հետազոտություններ», Երևան, 1969, էջ 319)։

36 Տե՛ս Բ. Ն. Ա ռ ա ք ե լ յ ա ն, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դդ., հ. 1, Երևան, 1958, էջ 165։

37 И. А. О р б е л и, Избранные труды, Ереван, 1963, с. 47—49, рис. 9.

38 Նման «ջահ» հայտնի է նաև Անիից (տե՛ս И. А. О р б е л и, նշվ. աշխ., էջ 67, նկ. 11)։

վկայել նաև Ստ. Օրբելյանի մոտ տեղ գտած մի անվավեր պատմություն, ըստ որի հոտաղ տղաների՝ «կնիւ» կոչվող բույսից հյուսած և մի քարի վրա գրած խաչի տակից ձեթի աղբյուր է սկսում բխել, որի վրա էլ կառուցում են Կնէվանքը. «բայց զտեղի կնիւնին թողին ի մեջ եկեղեցւոյն փոս մի դուզնաքեայ և մինչ յաւեր տեղւոյն ձէթ բղխէր ի փոսոյն այնքան՝ զի օտար ձիթոյ ոչ կարօտանային, այլ եկեղեցւոյն կանթեղունքն նովաւ կերակրիւր»[39]։

Գառնի գյուղի կենտրոնում պահպանվել են մի ձիթհանի պատերը և կալաքարը։ Պատի այն մասը, որտեղ ամրացվել են մամլիչի հեծանները, շարված է XIII—XIV դդ. բնորոշ մշակում և արձանագրություն ունեցող խաչքարերով։ Ձիթհանը հավանաբար կառուցվել է XIV—XV դդ.։ Գյուղաքաղաքը ձեթի մեծ պահանջներ ուներ ինչպես լուսավորության, այնպես էլ սննդի և տնտեսական այլ նպատակների համար։ Այսպիսով ձիթհանությունը նույնպես իր կարևոր տեղն ուներ Գառնիի բազմակողմ տնտեսության մեջ։

Գյուղաքաղաքի տնտեսության քննության համար կարևոր է ապրանքային արտադրության հարցը, որի չափանիշը առևտուրն է (հատկապես ներքին)՝ նրա ծավալը, ապրանքների տեսականին, կազմակերպման մակարդակը։ Եթե հացամթերքների, անասնապահական արդյունքների, ձեթի մասնակի ապրանքային բնույթը ենթադրելի է (ինչպես տեսանք, Սունպենց վանքը լուսավորության համար ծախսվող ձեթը գնում էր), ապա այգեգործական արդյունքների և առաջին հերթին գինու ապրանքային բնույթը հավաստում են ինչպես արձանագրական, այնպես էլ հնագիտական նյութերը։

Գառնիի ամրոցի տարածքում պեղված XII—XIV դդ. բնակելի-արտադրական համալիրների անբաժանելի մասն են կազմում հնձանները՝ խաղող ճզմելու հատուկ հարթակներով, կրաշաղախով մաքուր սվաղած գինու հորերով և մառաններով։ Գինու հորերն ունեն տարբեր չափեր. դրանց միջին տարողությունը տատանվում է 1,5—3 հազար լիտրի սահմաններում։ Մեկ հնձանը սովորաբար բաղկացած է մեկ կամ երկու հորերից, 3—8 կարասներից[40]։ Գինու այսպիսի մեծաքանակ պաշարների առկայությունը մեկ բնակելի համալիրում, անշուշտ, հավաստում է նրա ապրանքային բնույթը։ Այս իրողության հետ համահնչուն են Գառնիի առևտրի մասին հայտնի երկու արձանագրական տեղեկությունները (Խոշաք իշխանուհու արձանագրության մեջ՝ «...վերուցաք և ղգինոն բաժ», Հովհաննեսի և Վանականի արձանագրությունում՝ «վերուցաք... զհասարակաց գինոն և զամենայն ցեղ վաճառի տամղաս», այսինքն՝ ինչպես գինու, այնպես էլ վաճառվող այլ ապրանքներից գանձվող առևտրահարկը)[41], որոնք վերաբերելով նույն ապրանքին՝ գինուն, շեշտում են հենց դրա զդալի տեսակարար կշիռը ներքին առևտրում։

Շուկա հանվող ապրանքների երկրորդ մեծ խումբը արհեստագործական ապրանքներն էին։ Գառնիի հնագիտական պեղումները թույլ են տալիս այդ մասին ավելի մանրամասն խոսել։ Գառնիի XIII—XIV դդ. թվագրվող շերտերում երևան են գալիս խեցեղենի նոր տիպեր, որոնք մինչև XIII դ. երկրորդ կեսը Հայաստանում տարածված չէին կամ նոր էին սկսել տարածվել։ Հասարակ խեցեղենում տեղի ունեցած փոփոխությունները հատկապես ցայտուն են արտահայտված փոքր ծավալի անոթների վրա։ Դրանք կարմիր փայլեցումով նախաշազարդված բարակապատ թասեր և պնակներ են։ Փայլեցումը կատարված է պարուրաձև գոտիներով, թեք և ուղղաձիգ գծերով, ցանցերով։ Կարմիր փայ-

---

39 Ստեփանոս Օրբելեան, էջ 339։

40 Տե՛ս «Գառնի», էջ 37—44, Բ. Ն. Առաքելյան, Խաղողի վերամշակումը միջնադարյան Հայաստանում («Նյութեր Հայաստանի գյուղատնտեսության և գյուղացիության պատմության», հ. 1, Երևան, 1964, էջ 154—159)։

41 Որ տամղաս որպես առևտրահարկ (իսկ Հովհաննեսի և Վանականի արձանագրությունում գա նշված է հստակորեն) համապատասխանում է բաժին, առաջին անգամ մատնացույց է արել նշանավոր արևելագետ Վ. Վ. Բարտոլդը (տե՛ս В. В. Бартольд, Персидская надпись на стене аннийской мечети Мануче, Анийская серия, № 5,, СПб., 1911. с. 33)։

չեցումով անոթները հարդարելը ինքնին նորույթ չէր, սակայն եթե նախորդ շրջանում այն կիրառվում էր ընդհանուր ֆոնը կամ նրա զգալի մասը պատելու համար, ապա գեղագիտական նոր մոտեցումը կարմիր փայլեցումն օգտագործում է որպես առանձին նախշազարդող տարր՝ տարբեր հորինվածքներով այն ցրելով չփայլեցված ֆոնի վրա։ XIII դ. երկրորդ կեսից Հայաստանում սկսվում է նաև ենթաշնարակային նկարազարդումով խեցեղենի մասսայական արտադրությունը, որը մի շարք նոր տեխնոլոգիական տեղաշարժերի արդյունք էր[42]։ Գառնիում այդ խեցեղենը ներկայացված է մեծ բազմազանությամբ՝ ներառնելով ինչպես նոր տեսակի հումքեր, այնպես էլ նոր տեսակի ջնարակ, ներկեր, նախշազարդման նոր ոճեր։ Դրա զգալի մասի տեղական լինելը ապացուցում են թրծման հենակները, տեղական խեցին, զարդերի որոշակի տեղայնացումը, վարպետների տեղական նշանները[43]։ Այսպիսով, չնայած առ այսօր Գառնիում խեցեգործական արհեստանոցներ չեն գտնվել, բայց փաստերը անվիճելի են դարձնում տեղում այն արտադրելու իրողությունը։

Արհեստագործական արտադրանքը ներառնում էր նաև պղնձագործության արդյունքները։ Գառնիի XII—XIV դդ. շերտերում գտնվել են մի շարք պղնձե ձուլածո և կռածո իրեր։ Դրանք խոր, կիսագնդաձև թասերի բեկորներ են, առանց լրացուցիչ հարդարման կամ փորագիր նախշերով, սուր և երկար քթիկներով ճրագներ, սափորների մասեր։ Զգալի թիվ են կազմում ձուլածո փոքր խաչերը։ Դրանցից մեկի վրա պահպանվել է արձանագրության մի մասը։ Վերջինս թերևս պատրաստվել է պատվերով[44]։ Որոշակի թիվ են կազմում XII—XIV դդ. պատկանող մատանիները, մանր զարդերը։ «Պղնձե կռածո և ձուլածո իրերի մեծագույն մասը իր բնույթով այնպիսին է, որ չի կարող բերված լինել ուրիշ քաղաքներից, այլ պատրաստվել է տեղում և ցույց է տալիս պղնձագործական արհեստի տարբեր ճյուղերի առկայությունը միջնադարյան Գառնի գյուղաքաղաքում»[45]։

Պեղումների արդյունքները անտարակուսելի են դարձնում ապակյա որոշ իրերի (առաջին հերթին ապարանջանների, բաժակ-ղամպարների) վաճառքը գյուղաքաղաքում։ XII—XIV դդ. շերտերում հաճախ են հանդիպում նաև փիրուզագույն սմալտայից պատրաստված ապարանջանների, մատանիների բեկորներ, հախճապակյա ուլունքներ։ Սակայն Գառնիում այս ամենի արտադրության նշանների բացակայությունը թեական է դարձնում դրանք տեղական արտադրանքի տեսականու մեջ դասելու հարցը։ Սովորական էր նաև երկաթյա բազմաձև գամերի, պայտերի, շղթաների և այլ մանր իրերի արտադրությունը։ Այսպիսին է ապրանքների այն մոտավոր, ոչ լրիվ տեսականին, որ կարող էր առաջարկել գյուղաքաղաքի ապրանքային արտադրությունը։ Բնականաբար, մենք չանդրադարձանք մի շարք արհեստների (որմնադրություն, զինագործու-

---

[42] M. S. Dimand, A Handbook of Muhammadan Art, New York, 1958, p. 178—179; A. Lane, Early Islamic Pottery, London, 1958, p. 45—46; Э. В. Сайко, Среднеазиатская глазурованная керамика XII—XV вв., Душанбе, 1969, с. 21—22, 39—40.

[43] Խեցեղենի այս խմբերի տեղական լինելն առաջինը նշել և դրա օգտին փաստեր է բերել Գ. Հ. Կարախանյանը (տե՛ս «Գառնի», էջ 94—97, նաև Ա. Ծամկոչյան, Հայաստանի XIII դ. վերջի և XIV դ. հախճապակին («Պատմա-բանասիրական հանդես», 1975, № 1, էջ 230—239)։

[44] Արձանագրության պահպանված մասը հետևյալն է. «Կոստանտին/, զխաչս կազմեց յիշատակ Վարդուտին. ած ողորմի զա...»։ Պատվերով արհեստագործական իրերի պատրաստումը պիտի որ լայնորեն տարածված լիներ հատկապես գյուղաքաղաքում, որտեղ պահանջարկն ավելի սահմանափակ էր։ Ուշագրավ է, որ պատվերով աշխատող արհեստավորների մասին հատուկ հոդված ունի Մխիթար Գոշը (տե՛ս Մխիթար Գոշ, էջ 148)։ Դժբախտաբար պեղումներից հայտնաբերված նյութերի մեջ հաճախ անհնար է առանձնացնել անհատական պատվերով պատրաստված առարկաները։

[45] «Գառնի», էջ 60—61։

թյուն, պայտարություն և այլն), որոնց առկայության օգտին կարելի է փաստեր բերել, բայց դրանք անմիջապես կապված չեն շուկայի հետ։ Քննարկվող ժամանակաշրջանում Գառնին առևտրական սերտ կապեր ուներ Անիի հետ։ Բացառված չէ ենթաշնարակային նկարազարդումով խեցեղենի որոշ մասի, ապակյա իրերի ներմուծումը Անիից։ Գառնիի նյութերի մեջ առանձնանում են հախճապակյա անոթների և հախճասալերի մի քանի խմբեր, որոնք ներմուծվել են Քաշանից և Սուլթանաբադի շրջանից։ Հետաքրքիր տվյալներ կան նաև Ոսկե Հորդայի մերձվոլգյան քաղաքների հետ Գառնիի ունեցած առևտրական կապերի մասին։

Գյուղաքաղաքի ընդգծված երկրագործական բնույթը իր դրոշմն էր դնում ապրանքային արտադրության վրա, որի հաշվեկշռում առաջնակարգ տեղ էին գրավում ոչ այնքան արհեստագործական, որքան երկրագործական-անասնապահական մթերքները։ Գյուղաքաղաքի շուկան իրեն էր ձգում շրջակա գյուղերի բնակիչներին, որոնք այստեղ կարող էին վաճառել ինչպես երկրագործական, այնպես էլ տնայնագործական արտադրանքի բազմազան իրեր, ձեռք բերել գյուղաքաղաքում արտադրված և այլ քաղաքներից բերված արհեստագործական իրեր։

Որոշ փաստեր հնարավորություն են տալիս խոսելու նաև տեղում առևտրի կազմակերպման մասին։ Խոսքը վերաբերում է Հովհաննեսի և Վանականի արձանագրություններում հիշատակվող տամղատարներին՝ շուկայական և հարկային վերահսկիչներին։ Տամղատարները տեղական իշխանների (տվյալ դեպքում Զաքարյան) պաշտոնյաներն էին գյուղաքաղաքում։ Դա հավաստում են արձանագրության մեջ տեղ գտած «վասն մեր պարոնացն յերկար կենդանութեան», «ի մեծ պարոնաց խռովութի[ւն] անգանի» արտահայտությունները։ Մխիթար Գոշը «Յաղագս դատաստանաց վաճառաց» հոդվածում վկայում է ավան-գյուղաքաղաքներում ոչ միայն շուկայի գոյության մասին, այլև տալիս է շուկայի վերահսկիչ-պաշտոնյաների պարտականությունների հստակ ձևակերպումը։ «Եվ վաճառք ըստ հրամանի թագաւորաց կարգեսցին ի քաղաքս կամ յիշխանաց՝ ըստ հրամանի թագաւորաց եթէ ի քաղաքս կամ յաւանս կամ յայլ ինչ տեղիս ի գաւառս... Կարգեսցեն եւ կոչիչս միշտ որոնել և տեսանել, զի մի նենգութիւն ինչ արասցեն»[46]։ Տամղատարները հսկողություն էին սահմանում նաև արտադրական կառույցների՝ ջրաղացների, ձիթհանների և արհեստանոցների վրա[47]։

Գառնիում լայն ծավալ ստացած առևտրի օգտին է խոսում նաև XIV դ. 30—50-ական թթ. այստեղ գործած դրամահատարանի փաստը։ Գառնիում կտրված դրամներ են գտնվել Երևանի մոտ[48], Տավուշում (Թովուզ), Բաքվում[49]։

Առանձնահատուկ ուշադրության են արժանի արձանագրական այն տեղեկությունները, որոնք վերաբերում են գյուղաքաղաքի կառավարմանը։ Այդ սանդղակում, ինչպես տեսանք, կարևոր դիրք էին գրավում տամղատարները։ Թվում է, որ գյուղաքաղաքի ներքին կառավարման հիմնական ֆունկցիան կատարում էր տանուտերերի խորհուրդը։ Տանուտերերի մասին միակ վկայությունը պահպանվել է Հովհաննեսի և Վանականի արձանագրություններում։ Վերջիններս նշում են, որ հարկերը հօգուտ Սունպեենց վանքի վերացրել են «մեր տանուտէր/ացս բանիւ. Կարապետին, Ածատրո/, Խոյտամին, Ասխաթանա, Ամէնատ[րոյ]/, Միքէլին, Սէթին, Վարդին, Մէլիք[ջ]/անին եւ այլ մեծ ու փոքր տանուտէր[ացս]...»։ Այս հատվածը ցույց է տալիս տանուտերերի և տամղատար-

---

46 Մխիթար Գոշ, էջ 148։

47 Վ. Վ. Բարտոլդը տամղայի մասին գրում է. «տամղայի» տակ դրանից (բաժից—Հ. Պ.) բացի հասկանում էին բոլոր այն հարկերը, որ հավաքում էին քաղաքներում առևտրաարդյունաբերական հիմնարկներից, ներառյալ հասարակաց տները» (տե՛ս В. В. Бартольд. Նշվ. աշխ., էջ 34)։

48 Е. А. Пахомов, Монетные клады Азербайджана и Закавказья, Баку, 1926, с. 56.

49 Е. А. Пахомов, Клады Азербайджана и других республик и краев Кавказа, вып., II, Баку, 1938, с. 38—40.

ների միջև մի փոխառնչություն, որն արտահայտված է «տանուտերաց բանիւ» կապակցությամբ։ Տամղատարները հարկերը վերացրել են տանուտերերի խոսքով կամ հավանությամբ։ Արդյոք սա չէ՞ր նշանակում, որ տանուտերերը համայնքի անունից ինչ-որ փոխհատուցում էին խոստանում տամղատարներին[50] և որպես վկաներ բերվում են նրանցից ինների անուններն ու ավելացվում, որ այդ գործարքը բոլոր մեծ ու փոքր տանուտերերի «բանիւ» է։ Արձանագրության սկզբնամասում «վասն մեր պարոնացն յերկար կենդանութեան» (և ոչ թե հրամանով) արտահայտությունը և կապալի հիշատակումը («թէ որ... յայս կա/պալիս վերա լինի») վերջնամասում տարակույս չեն թողնում, որ տամղատարները դյուղաքաղաքի ողջ հարկը կամ նրա մի մասը վերցրել էին կապալով[51]։

Տանուտերերի ինստիտուտի մասին քննվող ժամանակաշրջանում բավականաչափ տեղեկություններ կան, սակայն դրանց մեծ մասը վերաբերում է գյուղերին։ Միջնադարյան գյուղը սովորաբար ունենում էր մեկ տանուտեր, որը հաճախ հիշատակվում է նաև «գեղջավագ», «ռեիս», «դեմեթար» տերմիններով[52]։ Քաղաքներում և գյուղաքաղաքներում արդեն գործ ունենք տանուտերական խորհրդի հետ։ Դեռևս XIII դ. սկզբի Գեղարդի մի արձանագրության մեջ կարդում ենք. «Ես Դոլս և Երևանո տանուտերքս և պարոնայքս...»[53]։ Անիի Մանուչեի մզկիթի վրա փորագրված Աբու-Սաիդի պարսկերեն արձանագրությունը (XIV դ. 20—30-ական թթ.) հայտնում է, որ ծանր հարկերի պատճառով «...տեղանքը (Անին և շրջակայքը—Հ. Պ.) սկսեց ամայանալ, հասարակ ժողովուրդը ցրվեց, քաղաքի և շրջանի տանուտերերը (պարսկերեն տեքստում՝ քեդխուդա—Հ. Պ.) կալանի և դռնագրի պատճառով թողեցին իրենց անշարժ և շարժական ունեցվածքը, ընտանիքները և հեռացան...»[54]։ Վ. Վ. Բարտոլդը հավանական է համարել, որ այստեղ հիշվող տանուտերերը քաղաքի առանձին թաղամասերի գլուխ կանգնած թաղապետներն են[55]։ Շիրակավան գյուղաքաղաքից հայտնի են երկու արձանագրություններ, տանուտերերի հիշատակությամբ. «...և այս գործոյս պատճառ շիրակաւանցիք եղեն քահանայք և տանուտերք»[56], «հրամանաւ պարոնացն... մեք Շիրակավանիս տանուտէրքս Խաչուտս և Մխիթարիչս և քահանայքս...»[57]։ Հետաքրքրական է, որ 1462 թ. Մարմետ գյուղաքաղաքում գրված մի հիշատակարանում նշվում են գյուղաքաղաքի 30 տանուտերերը[58]։ Ինչպես տեսանք, Գառնիում դրանց թիվը իններից ավելի շատ էր։ Այս փաստերը ցույց են տալիս, որ տանուտերական խորհրդի մեջ միայն թաղապետները չէ, որ մտնում էին։ Դժվար է ենթադրել Գառնիում իններից ավելի, իսկ Մարմետում 30 թաղերի գոյությունը։ Բ. Ն. Առաքելյանի տեսակետը, որ «ըստ երևույթին տանուտեր քաղաքում անվանվում էին ոչ միայն թաղապետները, այլև քաղաքի ուրիշ մեծամեծները...»[59], տվյալ դեպքում տարածելի է նաև Գառնի գյուղաքաղաքի վրա։ Վերոբերյալ արձանագրական տեղեկություններից կարելի է նաև մակա-

---

50 Համանման ակնարկ պարունակում է նաև Շիրակավանի մի արձանագրությունը (տե՛ս «Վիմական տարեգիր», էջ 247, Լ. Հ. Բաբայան, Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը XIII—XIV դդ., Երևան, 1964, էջ 485)։

51 Հարկը կապալով վերցնելը քննվող ժամանակաշրջանում բավական տարածված երեվույթ էր (տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. III, Երևան, 1976, էջ 664—665, Լ. Հ. Բաբայան, նշվ. աշխ., էջ 447—448)։

52 «Վիմական տարեգիր», էջ 50, 52, Լ. Խաչիկյան, Մատթեոս Ջուղայեցու կյանքն ու մատենագրությունը («Բանբեր Մատենադարանի», № 3, 1956, Երևան, էջ 73), նույնի՝ XIV—XV դդ. հայկական գյուղական համայնքի մասին («Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 1, էջ 110—112)։

53 Գ. Հովսեփյան, Խաղբակյանք..., էջ 319։

54 В. В. Бартольд, նշվ. աշխ., էջ 7։

55 Նույն տեղում, էջ 44։

56 «Վիմական տարեգիր», էջ 247։

57 Նույն տեղում։

58 Լ. Խաչիկյան, XIV—XV դդ. հայկական գյուղական համայնքի մասին, էջ 116։

59 Բ. Ն. Առաքելյան, Քաղաքները և արհեստները..., հ. 2, էջ 158։

բերել, որ տանուտերական խորհուրդը ընակավայրի ներքին հարցերը լուծելիս հանդես է բերում որոշ ինքնուրույնություն։

Գառնի գյուղաքաղաքում կար նաև դատավոր, որի իրավասությունների մասին տեղեկություններ չունենք։ XIII—XIV դդ. մի խաչքար-տապանաքարի վրա կարդում ենք. «ԶԳադիկ դատաւորն և զԳուրճի յաղաւթ յիշեցեք»[60]։ Կարելի է նշել միայն, որ տվյալ դեպքում դատավորը հոգևորական չէր։

Միջնադարյան գյուղաքաղաքի տնտեսամշակութային և սոցիալական կյանքի քննության գործում այս արձանագրությունների դերն անվիճելի է, մանավանդ, երբ հնարավոր է լինում դրանք համադրել մատենագրական և հնագիտական նյութերի հետ։ Այս քննությունից կարելի է կատարել մի քանի եզրահանգումներ։

1. XIII դ. 2-րդ կեսին և XIV դ. Գառնիում զգալի ծավալ էր ստացել ապրանքային արտադրությունը, որի մեջ երկրագործական մթերքների հետ միասին կարևոր դեր էին խաղում արհեստագործական ապրանքները։ Գյուղաքաղաքը վեր էր ածվել առևտրական նշանակալից կենտրոնի։ 2. Գյուղաքաղաքի արտեսության մեջ զգալի դիրք ուներ եկեղեցին, որն ակտիվորեն մասնակցում էր ծավալված առևտրին և առատորեն օգտվում զանազան արտոնություններից։ 3. Գյուղաքաղաքի ներքին կառավարումը գտնվում էր տանուտերերի խորհրդի ձեռքին, որը որոշ հարցեր լուծում էր ինքնուրույնաբար։

Մոնղոլական արշավանքի հետևանքով Հայաստանի մի շարք խոշոր քաղաքներ կործանվեցին, մնացածներն էլ բռնեցին աստիճանական քայքայման ուղին։ Այս պայմաններում տնտեսամշակութային կյանքը փոխադրվում էր ավելի փոքր կենտրոններ, որոնցից մեկն էլ Գառնին էր։ Սակայն նոր պայմաններում Գառնին չվերաճեց քաղաքի, արհեստավորական արտադրանքն իր վերջին և համեստ ծաղկումն էր ապրում։ Իլխանական պետության վարած տընտեսական քաղաքականությունը, որի մեջ Ղազան խանի բարեփոխումները միայն մի չհաջողված դրվագ էր, անուղղակի ծանր հարվածը, սովորական դարձած ավարառությունները ու ավերները պիտի որ շուտով կասեցնեին այդ զարգացումը[61]։ Եվ իսկապես, ինչպես ցույց են տալիս պեղումները, լենկ Թեմուրի արշավանքից հետո Գառնին աստիճանաբար կորցնում է գյուղաքաղաքի իր նշանակությունը։

НЕКОТОРЫЕ НАДПИСИ ИЗ ГАРНИ В ИСТОРИКО-АРХЕОЛОГИЧЕСКОМ АСПЕКТЕ (XIII—XIV вв.)

ГАМЛЕТ ПЕТРОСЯН

Резюме

Для комплексного историко-археологического изучения средневекового Гарни определенную ценность представляют надписи, высеченные на архитектурных памятниках поселения. На основе анализа текстов этих надписей и их сопоставления с данными письменных источников и археологическим материалом выявляются некоторые стороны экономической и социальной жизни средневекового Гарни: товарное производство, его ассортимент, основные черты организации торговли, а также структура внутреннего управления поселения.

---

60 Խաչքարը գտնվում է Գառնիի ձիթհանի պատի մեջ։

61 «Հայ ժողովրդի պատմություն», հ. III, էջ 640, 659—662։